Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման

և արտակարգ իրավիճակների նախարար

Արմեն Երիցյանին

Հարգելի պարոն նախարար.

Ստիպված եմ անձամբ դիմել Ձեզ և խնդրում եմ այս նամակը չփոխանցել այլ պաշտոնատար անձանց, որոնք իրավասու չեն (կամ ի զորու չեն) լուծելու վտանգավոր հետևանքներ պարունակող սույն խնդիրը:

Հարցի էությունը հետևյալն է. կենտրոնացված ջեռուցման վերացումից հետո Գավառ քաղաքի Մովսիսյան փող. 1-ին հասցեում (նախկինում՝ Գր. Լուսավորիչի 14) գտնվող կաթսայատան ծխատար խողովակն այժմ իրենից վտանգ է ներկայացնում: Մոտավորապես 25 մետր բարձրություն ունեցող խողովակը ամրացված է միայն մեկ պողպատե ճոպանով (մյուս երկուսը կտրված են) և տարբեր բնակլիմայական պայմանների պատճառով վայր ընկնելու դեպքում կարող է լուրջ վտանգ ներկայացնել բնակչության և հարակից տարածքում գտնվող շինությունների (բնակելի տների) համար:

Ձեմ կարծում, որ պետք է սպասել մինչև ծխատարի փլուզման պահը՝ մարդկային զոհերով և նյութական վնասներով, որպեսզի հետագայում մեղավորներ փնտրենք:

Այդ կապակցությամբ Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Գեղարքունիքի մասնաճյուղը գրավոր դիմել է Գավառի քաղաքապետարան, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարագ իրավիճակների նախարարություն՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել վտանգի չեզոքացման ուղղությամբ:

Սակայն, դատելով արձագանքներից (կցվում են), հարգարժան պարոնայք բավականաչափ «հեռու» են սույն խնդիրի լուծումից:

Այսպես, եթե Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը համապատասխան տեխնիկա չունի բնակիչների կյանքին սպառնացող վտանգը չեզոքացնելու համար, ապա ի՞նչ միջոցներով կարող է այդ

աշխատանքն իրականացնել օբյեկտի սեփականատերը (ում Գավառի քաղաքապետարանին հաջողվել է բացահայտել...):

Ինձ մոտ երկրորդ, ոչ պակաս կարևոր հարցն է ծագում. մի՞թե ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը կապալառու կազմակերպություն է, և սեփականատիրոջ մոտ տեխնիկայի առկայության դեպքում կարող է վերացնել արտակարգ իրավիճակը: Իսկ եթե նման տեխնիկա չկա, ապա 25-մետրանոց պողպատե խողովակը կարող է ընկնել ուր «խելքին փչի՞»...

Եթե ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը Գավառի քաղաքապետարանի հետ համատեղ հրապարակայնորեն երաշխավորում են մարդկանց և հարակից տարածքում գտնվող շինությունների անվտանգությունը, ապա այս պարագայում կարելի է սպասել այնքան ժամանակ, մինչև Նախարարության զինանոցում համապատասխան սարքավորում կհայտնվի:

Հարգելի պարոն Նախարար, սա այն եզակի դեպքն է, երբ տեղական ինքնակառավարման մարմինները և պետական փրկարար ծառայությունը պետք է հանդես գան միասնական ճակատով՝ որպես մեկ ամբողջություն:

Խնդրում եմ Ձեր օգնությունը...

Լևոն Ներսիսյան

Սախարովի կենտրոնի տնօրեն